ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 06/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2014թ. N 73-1/613553-14 գրությամբ «Ջեմսիկո» ՍՊԸ-ին գնումների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-06/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-06/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 15.12.2014թ. եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2014թ. N 73-1/613553-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Ջեմսիկո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2014թ. N 73-1/613553-14 գրությամբ Կենտրոն է ուղարկել Երևանի քաղաքապետարանի 30.06.2014թ. N 01/61-7082 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Ջեմսիկո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 08.07.2014թ. N 09/032-1192 գրությամբ դիմել է «Ջեմսիկո» ՍՊԸ-ին:

«Ջեմսիկո» ՍՊԸ-ն 28.10.2014թ. Կենտրոնին հասցեագրված դիմումով ներկայացրել է Ընկերության կատարած աշխատանքներին վերաբերող լուսանկարներ և փաստաթղթերի պատճեններ:

ՀՀ ֆինանսների նախարարության 08.10.2014թ. N 73-1/675061-14 գրությամբ Կենտրոն է ուղարկվել ՀՀ Նախագահին հասցեագրված «Ջեմսիկո» ՍՊԸ-ի գրությունը:

Վերը նշված գրությունում Ընկերությունը, մասնավորապես, նշել է, որ մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-14/65» ծածկագրով կազմակերպված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և առաջարկելով զգալի ցածր գին, համարվել է հաղթող:

Երևանի քաղաքապետարանի և «Ջեմսիկո» ՍՊԸ-ի միջև 05.05.2014թ. կնքել է «ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-14/65» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ «Ջեմսիկո» ՍՊԸ-ն որոշակի ժամանակահատվածում ունեցել է հարկային պարտավորություն, ինչի մասին ժամանակին չի հայտնել Կենտրոնին: Սակայն, նշվածի կապակցությամբ Պատվիրատուն չի ընդունել Ընկերության մեկնաբանությունն այն մասին, որ գործունեության ընթացքում հնարավոր է կարճ ժամանակահատվածում մնացորդի տեսքով հաշվապահությունում լինեն հաշվառված ընթացիկ որոշ պարտավորություններ, որոնց մասին շատ անգամ տեղյակ չեն լինում և այդ գումարներն ի հայտ են գալիս հերթական հաշվետվություններ ներկայացնելով, հարկային մարմինների հետ փոխադարձ ճշտումների ընթացքում և, որ կազմակերպությունն այս պահի դրությամբ որևէ հարկային կուտակված պարտավորություն չունի:

Ընկերությունը վերոնշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ի սկզբանե չի եղել պահանջ շինարարական աշխատանքների կատարման համար լիցենզիա ներկայացնելու վերաբերյալ, քանի որ աշխատանքները կատարելուց առաջ Պատվիրատուն

զննել է Ընկերության ներկայացրած փաստաթղթերը, չնայած նրան, որ այդ աշխատանքների կատարման համար լիցենզիա չի պահանջվում: Բացի այդ, 2011-2012թթ. ընթացքում Ընկերությունը քաղաքապետարանի պատվերով կատա-րել է մի շարք ավելի բարդ աշխատանքներ առանց լիցենզիայի պահանջի և վերջինիս կողմից ոչ մի առարկություն չի եղել, աշխատանքներն ընդունվել են և վճարվել են:

Ընկերությունը նշել է, որ պետական մարմինն անհեթեթ պատճառաբանությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը, խուսափել է վճարել արդեն իսկ կատարված աշխատանքների դիմաց և կիրառել է վարչական, քաղաքացիական և քրեական հարկադրանքի միջոցներ, որպեսզի մեկուսացնի Ընկերությանը շինարարական ոլորտից:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանը հաս-ցեագրված 30.06.2014թ. N 01/61-7082 և 09.10.2014թ. N 01/61-57130-Հ գրություններով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Ջեմսիկո» ՍՊԸ-ի միջև 05.05.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/65» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

Վերը նշված ծածկագրով Պատվիրատուի կողմից կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու շրջանակներում Ընկերությունը հրավերի պահանջներին համապատասխան ներկայացրել է հայտարարություններ՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների և բաց ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համա-պատասխանության մասին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ նաև Կարգ) 66-րդ և 87-րդ կետերը, 23.05.2014թ. N 01/61-5697 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով ՀՀ հարկային վճարների գծով տրամադրել տեղեկանքներ՝ ըստ Երևանի քաղաքապետարանի ներկայացրած համապատասխան ընկերությունների ցանկի:

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի վերը նշված գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.06.2014թ. N 1/1.3-1/8425-14 գրությամբ հայտնել է,

որ «Ջեմսիկո» ՍՊԸ-ն շրջանառության հարկի մասով ունի ապառք 519654 և տույժ 63917 ՀՀ դրամի չափով, ավելացված արժեքի հարկի մասով՝ տույժ 282770 ՀՀ դրամի չափով, շահութահարկի մասով՝ տույժ 50818 ՀՀ դրամի չափով, իսկ եկամտահարկի մասով՝ տույժ 9774 ՀՀ դրամի չափով:

Երևանի քաղաքապետարանը 23.05.2014թ. N 01/61-5696 գրությամբ դիմել է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն քաղաքաշինության բնագավառում գործող (տրամադրվող) համապատասխան լիցենզիայի (լիցենզիաների) տրամադրման, ինչպես նաև կասեցված լինելու վերաբերյալ (ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված համապատասխան ընկերությունների ցանկի):

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի վերը նշված գրության՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը 02.06.2014թ. N 01/22.1/2566-14 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ «Ջեմսիկո» ՍՊԸ-ն ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող լիցենզիա չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրեն-քի 43-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, Կարգի 66-րդ և 87-րդ կետերով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով և Պայմանագրի 8.1-րդ կետով, Պատվիրատուն Ընկերությանը հասցեագրված 18.06.2014թ. N 61/2769 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված կապալային աշխատանքների գնման պայմանագրից, ինչի հետևանքով Պայմանագիրը համարվել է լուծված:

Ընկերությունը Պատվիրատուի 18.06.2014թ. N 61/2769 գրությունը ստացել է 25.06.2014թ.:

ՀՀ Նախագահին հասցեագրված «Ջեմսիկո» ՍՊԸ-ի գրությունում նշված այն փաստարկի վերաբերյալ, որ Պատվիրատուն անհիմն է լուծել Պայմանագիրը, քանի որ Ընկերությունն իրականությանը չհամապատասխանող տվյալներ չի ներկայացրել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ աշխատանքների կատարման համար լիզենզիա չի պահանջվում, Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը որևէ հիմնավորում չի ներկայացրել այն մասին, թե ինչ հիմքեր են առկա, որոնք թույլ են տալիս պնդելու, որ տվյալ գործունեության համար լիցենզիա չի պահանջվում, այն դեպքում, երբ գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնման

ընթացակարգի հրավերով հստակ ներկայացված է եղել գնման առարկայի համար նախատեսված համապատասխան լիզենզիայի պահանջի վերաբերյալ տեղեկատվությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-06/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.12.2014թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2014թ. N 73-1/613553-14 գրությամբ ներկայացված «Ջեմսիկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-06/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2014թ. N 73-1/613553-14 գրությամբ ներկայացված «Ջեմսիկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/65» ծածկագրով բաց ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջեմսիկո» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է պահանջ, որ Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման աշխատանքների կատարման համար պահանջվում է լիցենզիա:

3. Ընկերությունը ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան ներկայացրել է հայտարարություններ՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների և բաց ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին (Ընթացակարգի հրավերի հավելվածներ 2 և 3):

4. Ընթացակարգի արդյունքում Երևանի քաղաքապետարանի և «Ջեմսիկո» ՍՊԸ-ի միջև 05.05.2014թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-14/65 պայմանագիրը:

5. Պատվիրատուի 23.05.2014թ. N 01/61-5697 գրությամբ կատարած հարցմանը ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.06.2014թ. N 1/1.3-1/8425-14 գրությամբ պատասխանել է, որ «Ջեմսիկո» ՍՊԸ-ն շրջանառության հարկի մասով ունի ապառք 519654 և տույժ 63917 ՀՀ դրամի չափով, ավելացված արժեքի հարկի մասով՝ տույժ 282770 ՀՀ դրամի չափով, շահութահարկի մասով՝ տույժ 50818 ՀՀ դրամի չափով, իսկ եկամտահարկի մասով՝ տույժ 9774 ՀՀ դրամի չափով:

6. Պատվիրատուի 23.05.2014թ. N 01/61-5696 գրությամբ կատարած հարցմանը ՀՀ քաղաքաշինության նախարարությունը 02.06.2014թ. N 01/22.1/2566-14 գրությամբ հայտնել է, որ «Ջեմսիկո» ՍՊԸ-ն ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող լիցենզիա չունի:

7. Պատվիրատուն, ստանալով վերոնշյալ տեղեկությունները, Ընկերության ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան ներկայացրած հայտարարություններում առկա տվյալները գնահատել է որպես իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, Կարգի 66-րդ, 87-րդ և Պայմանագրի 8.1-րդ կետերը՝ Ընկերությանը հասցեագրված 18.06.2014թ. N 61/2769 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված վերոնշյալ պայմանագրից, ինչի հետևանքով Պայմանագիրը համարվել է լուծված:

8. Ընկերությունը Պատվիրատուի 18.06.2014թ. N 61/2769 գրությունը ստա-ցել է 25.06.2014թ.:

9. Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի ուսումնասիրության ընթացքում Կենտրոնի 11.09.2014թ. N 04/032-1496 գրությամբ կատարած հարցմանը ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.09.2014թ. N 4-1/666484-14 գրությամբ պատաս-խանել է, որ 2014թ. ապրիլի 11-ի դրությամբ (հայտը ներկայացնելու պահին) Ընկերությունը շրջանառության հարկի մասով ունի ապառք 519154 և տույժ 63077 ՀՀ դրամի չափով, ավելացված արժեքի հարկի մասով՝ տույժ 282770 ՀՀ դրամի չափով, շահութահարկի մասով՝ տույժ 50818 ՀՀ դրամի չափով, իսկ եկամտահարկի մասով՝ տույժ 9776 ՀՀ դրամի չափով:

10. Կենտրոնը 23.09.2014թ. N 04/032-1557 և 27.10.2014թ. N 04/032-1724 գրություններով դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն և խնդրել է տրամադրել տեղեկատվություն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար շինարարության իրականացման լիզենզավորման անհրա-ժեշտության վերաբերյալ:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը Կենտրոնի 23.09.2014թ. N 04/032-1557 և 27.10.2014թ. N 04/032-1724 գրություններով հայցած տեղակատվությունը Կենտրոնին տրամադրել է իր 07.10.2014թ. թիվ 22.1/5041-14 և 07.11.2014թ. թիվ 22.1/5646-14 գրություններով:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-06/14 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի աղյուսակում: Նույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզավորման ենթակա գործունեություն է համարվում շինարարության իրականացումը (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրա-վունք

չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրա-պետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մաս-նակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 66-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Կարգի 66-րդ կետում ամրագրված դրույթը սահմանվել է նաև կողմերի միջև կնքված Պայմանագրի 8.1-րդ կետով:

Կարգի 87-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների համակարգողը և (կամ) գնահատող հանձնաժողովը կարող են ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում, համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն:

Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա գնման գործընթացներին տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են:

Կարգի 149-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցա-կում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Ջեմսիկո» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտարարություններ՝ հրավերով սահմանված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, մինչդեռ վերոնշյալ հայտարարություններն իրականությանը չեն համապատասխանել, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու դրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություններ:

Բացի այդ, Ընկերությունը չի ունեցել ՀՀ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա, մինչդեռ ՀՀ քաղաքաշինության նախարարությունից ստացված տեղեկատվության, ինչպես նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ շինարարության իրականացումը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն, և լիցենզիայի առկայության պահանջը սահմանված է եղել Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետով:

Այսպիսով, «Ջեմսիկո» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալներ, որոնք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հիմք են մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2014թ. N 73-1/613553-14 գրությամբ «Ջեմսիկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Ջեմսիկո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Ջեմսիկո» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ազգանուշ Ֆրանգյան**

Անդամ՝ **Ռուդիկ Օհանյան**